h.1423744
26-02-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *«ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ*
Հասցե՝ *ԼՈՌԻ, 2001, ՎԱՆԱՁՈՐ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ Փ., 47/13-1,*
directdemocracy451@gmail.com : 37477343745

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Կից 1 ֆայլ։

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Կից՝ 1 ֆայլ

Դիմող՝

ԳԵՎՈՐԳ ՔՈԹԱՆՋՅԱՆ

«Ուղղակի ժողովրդավարություն»

ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման ՀԿ
Հասցե. Լոռու մարզ. ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 47/13-1
Հեռ. (+374)(77) 34-37-45

Ուղղակի Ժողովրդավարություն

"Direct democracy" NGO for consolidation democratic institutions NGO
Address: Lori Region, Vanadzor Tigran Mec 47/13-1

Tel. (+374) (77) 34-37-45

Լոռու Մարզպետի աշխատակազմ

Մարզպետ Արամ Ղազարյանին

Հարցում

Հարգելի Պարոն Ղազարյան

Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի թիվ 2693 որոշման.

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԼԱՎԴԻՅԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 120.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18102024-06-0076 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 346500 (երեք հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարվել է Կլավդիյա Ալեքսանդրի Կոստանդյանին՝ հողամասի ընդլայնման նպատակով, որի համար հիմք են ընդունել 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 34 որոշումը, սակայն համայնքի ղեկավարի որոշման մեջ 09.12.2024թ.-ի համայնքի ղեկավարի 2709 որոշմամբ փոփոխություն են արել՝ որոշումից պարզապես հանելով վերնագրի «ավտոտնակը և» բառերը:

Խնդիրը կայանում է նրանում, որ ավագանու 26.04.2023 թ.-ի թիվ 34 որոշման մեջ նշված հասցեով հողամաս առկա չէ:

Խնդրում եմ պարզաբանել, ինչ հիմքով է իրականացվել ուղիղ վաճառքը, արդյոք ամեն դեպքում առկա է ավտոտնակ, թե հողամասն օգտագործվում է այլ նպատակով:

Ավագանու համապատասխան որոշումը չունենալու պարագայում խնդրում ենք ձեռնարկել քայլեր՝ համայնքի ղեկավարի կողմից ակնհայտ ոչ իրավաչափ որոշումն անվավեր ճանաչելու համար:

Հարգանքով՝ «Ուղղակի ժողովրդավարություն»

ՀԿ նախագահ Գ. Քոթանջյան

26.02.2025թ.